

Բ Ո Ւ Լ Ա Ն Ը Խ

Կ Ա Ր

Հ Ա Ր Ք Գ Ա Ի Ա Ռ

Ռ Ե Տ Ե Ի

Հ Ա Ի Ա Տ Զ *

Ա.

ԲԱՐԻ ԵՒ ՉԱՐ ՀՐԵՂՏԱԿՆԵՐ

Հրեշտակների մասին ժողովուրդը կը պատմէ.

ա. Աստուած 12 դաս հրեշտակ ստեղծեց. լէ երեք դաս Հնազանդ չմանցին. Աստուած լէ բարկացաւ թափեց երկնուց ցած. կէս կախուան երկնուց յերսով, կէս թափան վրը գետնին, կէս լէ լիջան յանդուհք: Էն դահ օր Գարբէլ Հրեշտակ գմեռելի հոգին կը տանէ երկինք, էն կախվուկ սատանէք կիզան ի յառջև օր խլեն զհոգին Գարբէլից: Ընդոք օր թափվան գետին, լըմէն հաղ (միշտ) լընկուզ ին հակառ հըտ Ագամորդուն (մարդոց), տալապ կէնին (աշխատել) օր Աստծու ճամբուց շաշ էնին (ծռել) գմարդ: Աստծու օղորմութենով բարի հրեշտակ լէ չուիշ կիզայ օր մարդ Աստծու տօղրի (ուղիղ) ճամբուց չեխնայ:

«Վրը մարդու աջ թւին բարի հրեշտակ մ' է կանուկ, վրը ձախ թւին՝ չար հրեշտակ. մէկ կաշխատի օր մարդ ուր (իւր) խօսքն էնէ, մէկէլն՝ ուր. ամէկու (ամէն մէկուն) ձեռք դաֆտար (տոմար) մէկայ, մէկն զբարութենի գործքեր կը գրէ, մէկն զչարութենին: Գիշեր լէ օր կէղնի, բարի հրեշտակ մարդու գլխու վրաէն (վերեից) չհեռանայ»:

*) Տես Ազգագրական Հանդէս, գիրք Ե.

Որպէս զի պահապան բարի հրեշտակը չհեռանայ քնացողից, երեկոյեան «իսթը չեն ուտեր, որ հրեշտակը չզարշի»:

Բարի հրեշտակներն են՝ Գաբրէլ, Մուքայէլ, Սերորէք, Քերորէք—ինն դաս հրեշտակներ: Գաբրէլ հրեշտակ հոգեառն է¹⁾:

Հաց թխելու ժամանակ կանայք աղօթքի մէջ Հոյե հրեշտակ մի ևս կը լիշեն.

«Հաց, Հոյե հրեշտակ,

Սրդար եզան վաստակ,

Ելնաք բարեխօս առ Աստուած»:

Գաբրէլի փոխանակ՝ առաջ գրողն էր թէ մարդոց գործքեր գրողը և թէ հոգեառը, Հոգի տանողը: Թէև գրողի գոլութեան մասին այժմ որոշ պատմութիւն մի չկայ, բայց հետեւեալ Հատ ու կտոր խօսքերից և անէծքներից կիմացուի նորա թէ անձնաւորութիւնը և թէ ինչ պաշտօն ունենալը:

1. Գրողը իսթը եղած կը լինի. օրինակ, երբ դէպի մէկը ունեցած սաստիկ ատելութիւնը ուզենան ցոյց տալ, կասեն. «ես գիտամ (գիտեմ) ... մարդը իմ իսթը (կտր) գրողն է»:

2. Գրողն էր Հոգիք տանողը, օր. «գրողի տարուկ, գրողին տամ զբըղի», (անէծքներ): «Զքու Հոգին տաս գրողին՝ չեղնի էդ բան»:

3. Գրողը քրտած՝ դնելով մարդոց բերանը՝ Հոգիները կառնէր, ինչպէս Գաբրիէլի Համար կը կարծեն՝ որ ոսկի խնձորով երեխայոց Հոգիները կառնէ—«գրողի բրդուճ դնեմ քու բերան» (անէծք):

բ. Չար հրեշտակներու գլխաւորը Սոթայէն է, որու խրմբին կը պատկանին՝

1) Սոթայէն, չարէր, որոնք մարդիկ կը մոլորեցնեն:

2. Քոթայէր, որոնց կայանն է աշխարհայէր, ծովերը²⁾ և ջրային տեղերը: Աղբիւրներու մի մասը սրբոց կը պատկանի,

¹⁾ Տաճիկներէն առնելով «Ազրայէն» ևս կանուանեն Հոգեառ ու միւնոյն ժամանակ Ազրայէլը քաջութեան նշանակ կը համարուի, երբ մի մարդ արտասովոր քաջ ու կտրիճ լինի՝ կանուանեն Ազրայէլ:

²⁾ Տես խաչուայ լճի մասին եղած աւանդութիւնը:

ուր ուխտ կերթացուի, իսկ միւս մասը քաջքերու կայանը, այդ պատճառով երբ ջուր խմեն, երբ լուացուեն, երբ գետով անցնին, երբ աղբիւրի մօտ երթան՝ անպատճառ «Յիսուս Քրիստոս» կը շշնջեն:

Ինչպէս հէքեաթներից կիմացուի, քաջքերը թագաւորութիւն ևս ունէին, որոնց զլիաւորը կը կոչուէր «քաջանց թագաւոր»:

Յ) Դէվէր (դև), որոնք՝ ինչպէս կը պատմեն հէքեաթները 7—40 եղբայր և ընկերներ էին, խմբովին կը բնակէին, մարդոց հետ յարաբերութիւն ունէին և շատ ընդհարումներ ունեցած են «Աղամորդու» հետ, բայց ընդհանրապէս յաղթահարուած: Հողածնի աղջիկ կը փախցնէին. հարամիութիւնով (աւազակ) կըբարդուէին, քառասուն կանթէ պղնձով կերակուր կեփէին, քառասուն գազկան հորեր կը փորէին թշնամին մէջ ձգելու համար և այլն: Դէվերից ոմանք «եօթ գլխանի» են եղած:

4) Միւսն է Գէվէր, սոցա մասին պատմած ժամանակ, նոյնութեամբ կը վերջի Ողիսևսի՝ կիկլոպի հետ պատահած դէպքը, մեծ այրը, ոչխարի հօտը. հրաշէկ երկաթով կիկլոպի քնած ժամանակ աչք խարելը, ոչխարի մորթի վրայով ձգած կիկլոպի ոտքերու մէջով անցնիլը և այլն և այլն:

5. Ձօր, շուտները խմբերով կը պտտին և ձմեռուայ ձևատ (տաճկաց ձուքաթ—Փետրուար) ամսուն երևան կուզան. այս ամսուայ վերջին օրուայ երեկոյեան բոլոր շինութեանց երգիքներն ու ցուիքները բոլորակի կը գծեն, և երբոր միջնաց, կառնեն մի գողնոց ու ախոռի սներուն, պատերուն զարկելով ձուտները դուրս կանեն, ասելով «ձուտն ի դուս, Մարտէն (մարտ ամիսը) ի ներս»:

Դուրս անելուց յետոյ՝ դրսի դռան շէմքի տակ թունդրի խփիլիլը կը ձգեն որ նորից չվերադառնան, իսկ երգիքներից ներս մտնելը 4ծէրը կարգիլեն:

Գիտնալու է՝ որ եզդիներու շուրջը 4ծէ քաշած ժամանակ, դուրս չեն ելներ, մինչև որ զիծը չաւրեն:

Ձուտ դուրս արած ժամանակ՝ ախոռի մօտէ 4խոռն գող-

նոցովը չեն դարկեր, որպէս զի տան Դժլուրը (Հարստութիւնը) դուրս չերթայ:

«Քան սանամէր, կասեն կանայք մէկ մէկու, զիշերսի ես դուրս չելայ, քոմ մէ ձւօտ կանուգ էն (էին) Եղոցնց դուռ, հըմալ կանի՝ ծէն, հըմալ կանի՞ծէն էդ Եղոցի տան, օր զուրանք դուրս էրին իդա ձուռ ու ձմրանոցով Ի՛նչ կեղնէր, կրսէն ձւօտները, իդա երկու պող ամիս լէ թողէն զմրզի մընէնք (մնայինք) տաք թաւի գլուխ»:

—Ա՛յ, Խաթուն եղնիկ Տիրամէր, դու զչար խափանցուս:

«Քա, Խթուն (խաթուն, տիկին) կասէ մի ուրիշը, ես լէ իդա զիշեր՝ ոչ քուն էնք ոչ արթուն, հեղմ՝ լէ լսեցի, օր ձւօտ մէ կրսէր ուր ընկերոջ,—Խոչ, արի, արի, շէնքացեր իմ վըր իդա մարդուն, արի ընձի օգնութեն»:

—Յիսոս ու Քրիստոս, դու զչար յետու հեռուն էնիս:

Փետրուար ամսուն որովհետև կատունները ցուլ կուզան և կսկսին նահաւ, ժողովուրդը կը կարծէ որ սոցա և ձւօտներու մէջ մի ինչ որ յարաբերութիւն կայ:

Այս ամսուայ մէջ ծնած այժի ուլերը չեն ապրի, որովհետև ձւօտները կը տկարացնեն կամ էլ փոփոխ, այդ պատճառով ուլերու վզից բոժոժներ կը կախնն:

Ձւատ ամսուայ գիշերները տեճուած երազին հաւատ չեն ընծայեր, կարծելով որ ձւօտներն են խաբէրը:

6. Գարուս.—Գարուն էնէ, (կասեն զիւզացիք) օր գիշերները կը գարի (պարկել, ծնկան գալ մէկի վրայ) վըր մարդու բօկին՝ օր զմարդ խեղդէ. Էնվախտ օր Գարուս կիջնայ վըր քըզի՝ քանի կունաս զօր տու յէլի, առ զընդրա թզպեղն տար էցկէ (անցողը) կժան բերան, էդ հըմալ օր էրիբ՝ Գարուս կը դառնայ մարդու օրինակ, կեղնի քըզի հէսիր (գերի)»:

Գարուսը մարդ խեղդել ուզած ժամանակ, իւր թզպէհն (Համրիչ) կը թողնէ մարդու կշտին: Քամակի վրայ պառկած ատեն արեան ծանրանայլը կոչուած է գաբոս:

Կանայք Աւագ Հինգշաբթին գողգոթէ օղմիտը շինել տալով կանցկացնեն վզերնին՝ որպէս զի գարուսը չմտենայ իրենց:

7. Խիւլի.—Քան քաւոր քուր, իդա (այս) Նրկոց տուն ամներ (ամաններ) չօրին ջմէն խոռուկ ին»:

—Ձը լը՛սերիս, Խիւլի է անիծի, աղոնց մեծ պապու վախտ ցանուկ արտմէ կը քաղին, բարդոցին, սէլերով կը կրին չընկրի՝ չետք չիգայ, չարայ չեղնի՝ գզրկեցներու սէլեր ջմէն կը քօմեն տանն ի

յարտ, ամէկ բարդոցի չառջև սէլ մէ կը կանգցուն, զսէլեր չըմէն կը բառնան, յետին բարդոցի տակ մարդու օրինակ բա մէ (բան մի) կելնայ դու, մախաթ կը չքցուն փողպատ՝ կը բռնին, կըսին. դու դու ճնխ, կըսէ. Ես Խիպիլիկն իմ, ես էնք (էի) օր չընք թողի ցորնի բարդոցներ խսէր (վերջանար)»:

«Խիպիլիկ կը բերին տուն, կէնին ուրանց մշակ, հըմալ ժիր կեղնի, օր մէկ սհաթուայ մէջ 10 մարդու բան կէնէր. 4—5 ոյխըրի բուրդ դախէ մը խըղար (րոպէի մէջ) կը գգէր, մանէր՝ կանէր չօնա (այնտեղ) էն մէկ օր խիպիլիկ կը քերւըտի, էդ տուն լէ գողուէճ պառաւ մէ կեղնի, կըսէ՝ խիպիլիկ, արի տանիմ գքըզի ճալալ (ջրօր տուն) լողկցում. կերթան, էն վախտն օր կը տղոզնայ խիպիլիկ օր ջուր չընայ վըր ուրին, պառա խալդնօք (սխալմամբ) կըսէ՝ Յիսոս—Քրիստոս, խիպիլիկ կը բօռայ կըսէ. Ձեր տան ամներ չըմէն խորուկ (խոռ, բէրանի մէկ կողմը կոտորուած) եղնին չուրի չաւտեանս չաւտինից, ու նա բաղիր (նա բէղեղ, աներևոյթ) կեղնի»:

Խիպիլիկն քօլօս (բրդէ գգակ) մի կայ, կասեն գիւղացիք, որ եթէ կարողանայ մէկը ձեռք բերել և դնել դուխը՝ աներևոյթ կը դառնայ, ինք չտեսնուիր թէև, բայց ամէն բան կարող է տեսնել առաջուայ նման:

8. Ալ.—Սորա համար կը հաւատան որ մարդոց փորից կերակուր կը քաշէ. ազահութիւն կը թափէ երեխայոց վրայ, որովհետև երբ երեխայ մի անկուշտ լինի՝ կասեն. «օշ, Ալ Է քաշի փորէդ»։ մի քանի տեղեր երեխայոց ազահութեանը վերջ տալու համար թղթաբացներուն դիր անել կուտան:

Երբ մի բան յանկարծ կորսուի՝ «ալոց գալոց» եղաւ, կամ «ուփուլ եղաւ կասեն, որ անշուշտ Ալք լինելու է:

Ալէ հետ Ղալ ևս կը լիշուի, որ նոյնպէս ազահ մարդոց համար կը գործածուի:

9. Թողոյ.—Այս ճիւղը յայտնի է չղի կանանց վրայ թպղոտութեան ցաւ թափելովը:

10 Փէրիէր.—Մինչ առաջինները որս կը կարծուին, փէրիները աղջիկ են, որոնց ծագման մասին ժողովուրդն հետևեալ դրոցն ունի:

«Կըսին Նոյն օր մտաւ տասպան, ջրհեղեղի վախտ՝ Նոյա տղէկներուց մէկն չկրցաւ օր զինք ռաբէր (զսպել) յելաւ ուր անկողին, աղջիկ մեղաւ ուրին. ջրերն օր չիջան (ցածանալ) Նոյն ու ուր ճօեր

դուս պտի (պիտի) չեղնէն, էն պզտիկ աղջիկ մնաց ներս, հրիշտակն եկաւ հարցուց, թէ՛ ՚հոյ, էլ մարդ չմնաց ի ներս»։—Աէ, ըսեց Նոյ.

«Թէ մարդ մանցերէ՛ եղնի՛ աներևութք»։

«Թըղ եղնի, ըսեց Նոյ, ուր ահուն (երկիւղից)։

«Էն սհաթի՛ն աղջիկն եղաւ աներևութիւն լընկաւ աշխարք, քնու մէջ մտեցաւ մարդկոց հետ զուր ցեղ շատցուց»։

«Մարդ օր մկա (հիմա) յարեալ կեղնի՛ սարաբն (պատճառ) ինչ է, —էդ փէրիքն են»։

Երագափորձ չինելու համար գիշեր հաշտութիւն կը դնեն բարձի տակ։

«Ստամբօլն էնք (էի) կըսէր Դ. օրմ՛ չիրկուն դարձայ իմ զեռե, տեսայ օր տալտտ ալուկ, ջլերս (անկողին) փուռկ, լըմէն բան հաղրուկ էր (պատրաստած), աջպըցայ (զարմանալ) ջանքմ, ըսի, ես զիմ դուս փակեր եմ գրաւնիք տարեր եմ հետս. էդ ո՞ր պտի եղնի. օրմէ չէ, երկու չէ, էն մէկ օր տափայ մահլիճքի (փոխանակ մահճակալի) տակ՝ Բուրջ էրի (սպասեցի). մէկ լէ տեսայ հարեալ հրեշտ աղջիկ մէ յեկաւ երևան.

«Դու ո՞ն իս, հարցուցի.

—Քու սէրն է բերի զիս յօղա (այստեղ), Եստճու խաթրուն եղնի մարդու ջըսիս. հանդէ (աւասիկ) մեր ըստալի աղջիկն չէ ճուկէ (սիրահարուած) Ֆլան (այս ինչ) թաղի դարբնի վրէն. մտերէ չուրէ չուրէ (կերպարանք) ու հարի չերկուն մաշուղ եղեր է դարբնին, նստեր է դարբնոցի դուռ. դարբին լէ չուրէ (սիրահարուած) կաշքէ շան երես»։

«Ուր օր դարբնոցի դռնով չընցայ, հարեալ (արդարև) օր հըմալ էր, իմալ աղջիկն ըսեց. օրմէ չէ, երկու չէ՛ էն մէկ օր սիրտսի ուռաւ էլ չկրցայ օր հըմբերէնք. ըսի՛ չուր, քօփալ (քէօփէք, շուն), չըս անչընայ, տար չեք (մինչև երբ) աչքիս էդ մուռտալ (պիղծ) շան չերես, էն սհաթի՛ն չուր (չուր, դիւթութիւն), բլաւ (եղճուեցաւ), շուն նաբաղիբ (նաբէղեղ, աներևութ եղաւ) եղաւ. չիրկուն ո՞ր դարձայ տուն՝ էլ աղջիկ չտեսայ, թէ դրեր իս՝ արի տես, կորաւ էլ չեկաւ»։

«Քուց օր չեղայ՝ լուսմթին գացի իմ բան ու գործին, ճամբու վրէն թալուկ էր (չգած էր) օձ մէ, ես գիցայ օր էնի իմ հուրնիկ հրեղէն աղջիկնէր, չունքի ընձի ըսերէր, թէ չուրէ չուր — չուրէն բան մը՛սի, թէ չէ՛ էնի մեր թագաւորի աղջիկն է, կէնէ զիս օձ, կը փուցու (մեռցնել) թալէ ճամբներ»։

* * *

«Ջաղցպան Աղէկ աղլալ (միշտ) խսա կէնէր (պատմել). կըսէր կս ջաղացն էնք (էի), էն մէկ օր իսկի մարդ չը մնաց մօտսի. հար-

քէս (ամէն մէկ) գաղուն թողեց իմ ռամուդով (յուսով) գնաց ուր տուն, ջանդան գա՛հ էր (ուշ ժամանակ էր) մենակ նստուկ էնք, ես տեսայ դօր ու գուռնի ձէն եկաւ, դառնամ աչքիմ օր՝ 10—20 կնիկ, հագուկ, խսիուկ (զուգուած, գարդարուած) պար բռնած են ու կը խաղան։ Ես տեսայ կնիկ մ'եկաւ մըտ ընծի, ըսեց. Աղէկ, չօրին իս նստի, յէլի խաղցի, չարէս կտրաւ յեղայ բռնի պար ու խաղցայ, աչքիմ աչիմ՝ սօ ես, իդա կնկայ վրէն իմ քաւորքուր Ա-ի ք-քէն է (կանանց ասուէ հագուտ), յուշիկ մէ գլխտուն հանեցի ջէքէս ու զգալմի մէկ փէշ կտրեցի, հրտ իմ կտրելուն՝ կնկտիք աներուութ եղանկ։

„Էն լուսուն գացի քաւորոջ տուն. ըսի ըշտէ իդա գիշեր հրմլա հրմլա բան մէ պատահրաւ, մարդ չաւտցաւ (հաւատալ), ըսի ջանըմ, չօրին չըք աւդրնայ, բերէք գքաւոր քրոջ դայմէն սանք (տեսնանք). դայմէն օր բերին՝ օղորդ օր մէկ փէշ կտրուկ էր, իմ մօտու կտոր լէ աչիկ (ճիշտ) էդ դայմի կտորէն էր“։

Որպէս զի կանանց հանդերձները փէրինները չզողանան, սնդուկ զրած ժամանակ կը խաչակնքեն¹⁾։

Փէրինները նոյնպէս կը զողանան ի-դը, այդ պատճառով տանտիկիները իւղի բղիկները կը խաչակնքեն և իւղի վրայ խաչ կը քաշեն։

Ձիերու բաշի մազերը երբեմն հլուակէնի ձևով կը խառնուին իրար և այդ փէրիններուն կը վերադրեն։

Երեխաները, իբրև խաղ, քնացող երեխայի գլխու վերև կանդնած՝ սովորաբար երկու հոգի, փայտի մի երկու ծայրերից բռնած՝ ուրիշ փոքր փայտով կնտկնտոցի նման վրան քսելով կերգեն։

• . . . Ջաղցի սատանէք,

Արէք ու սարէք,

Արէք ու սարէք».

Քնացողը զարթնելով խենթի նման կը փախնի և կերթայ դտնելու սատանէքը։

Չգիտցուիր ինչ պատճառով երբ մէկը բարկանայ և խոռվի՝ գիւղացիք ծիծաղելով կասեն. «Իծո-ուն (այծեր) ոտբերու-եկած են մօտ» և հանդարտուելու ժամանակ նոյնպէս իծո-ուն Գ-ոյն ոտբեր (փէրիք ?)։

¹⁾ Հալաւ օրհնէքի աղօթքի մի իշխեսցէ մերձենալ ի սոսս չար աղանդ-տի-ոյ կամ «ի-բեր-ոյ» խօսքերը երևի փէրիններ կակնարկեն (Պաշտոց)։

Որովհետև փէրիք, չարքեր և այլն որոշուողից կը վախենան, այդ պատճառով ամէն կին տեղ մի կը զարկէ կամ շապկի փողպատը (օձիքը) կամ գլխարկի մէջը: Նոյնպէս տղոցկանի բարձի տակ դասակ, տեղ և այլն կը դնեն: Նորասպաններ դրունով ներս մտած և դուրս ելած ժամանակ Քուր կը բռնեն գլխուն: Գարնան սկզբներուն երբ անասունները առաջին անգամ դուրս կը հանեն՝ թունդրի խաչքիւնը կը ձգեն դուրս շէմքի տակ. այսպէս և անտո՛ր կարկուտ տեղացած ժամանակ:

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՒԹԻՒՆ

Փողովուրդը կը կարծէ՝ որ մարդիկ երբեմն կը կերպարանափոխուին. շատ վտիտ և տկարութեան պատճառով նիհարացած երեխաները կը կոչուին փոփոքուրիկ:

ա. Երբեմն կը լինին գրողէ գրէր (տես Ձեռնօր):

բ. Երբ գիշերով տկող դուրս ելնան՝ «երկնուց զիլու փօստ (մորթի) կիջնայ վըր մարդու՝ կեղնի գէշ», այդ Հասկացողութեամբ վիթխարի և անճուռի մարդոց գիշերնի, Գորգագէշ, Գեշուրէ (քրտ. գիշերային մարդ) անունները կուտան:

գ. Արջը ծագումով Գորգ է և ինչպէս կը պատմեն պառաւները, Գորգի կոչումը ժողովրդից սերած է, դորա Համար էլ շատ կը սիրէ մարդոց հետ մօտիկ յարաբերութիւն ունենայ¹⁾: Թէև Հէքիաթի ձևով բաց Հաստատ Հաւատալով կը պատմեն դէպքեր՝ որ արջը «իշտէ ժամանակ մէ, Ֆլան գեղէն կնիկ մէ կը փախցու տանէ սար, շաբաթ մ' երկու կը նստի կանի հետ, Հապամ կնիկ խարութեամբ կը փախնի պրծնայ»:

ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆ

Մեծ Հաւատք կրնճայուի կախարդութեան, որոյ ներկայացուցիչներն են՝ «Մողմոնի», «Սխտարք» և «ԱնցՀագարիկ» կարդացող թղթացները:

¹⁾ Դժիկ աղջիկ մի Գորգի կը լինի. գետափը անասունի լէշ տեսած ժամանակ՝ կատ «ախ», երանի թէ աս Գորգը (գազան, կենդանի) մի լինէի և չուր Գորգ ուտէի. Աստու հրամանքով կը դառնայ արջ: Փողովուրդը կը կարծէ, որ արջին եթէ Գորգ ասեն՝ իսկոյն կը շարկանայ և կը յարձակուի մարդու վրայ: